Գնահատեք Փողի Արժեքը

- Արտարժութային փոխարժեքների, գործարքների անընդհատ թարմացումներ
- Ոսկու փոխարժեքների անընդհատ թարմացումներ
- ՀՀ կենտրոնական բանկի կողմից իրականացվող աճուրդներ
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվող աճուրդներ
- Բորսայում իրականացված գործարքներ
- Դրամային իրացվելիության ցուցանիշներ
- Բանկերի միջև ՀՀ դրամով և արտարժույթով վարկային գործառնություններ
- Ֆինանսատնտեսական նորություններ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ» ԿԱՐԳԸ

Հավելված 5
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հունիսի 7-ի թիվ 142-Ն որոշմամբ

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի (այսուհետ՝ պարտատոմսերի) երկրորդային շուկայում շրջանառության կարգը:
2. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացություններն են.
1) Բանկ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ:
2) Թողարկող՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:
3) Պարտատոմս՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից թողարկվող կարճաժամկետ, միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր, ինչպես նաև հետագայում թողարկվող և շրջանառվող պետական այլ պարտատոմսեր, եթե տվյալ տեսակի պարտատոմսի շրջանառությունը կանոնակարգող իրավական ակտերով սահմանված կլինի, որ սույն կարգը տարածվում է տվյալ պարտատոմսի վրա:
4) Գործակալ՝ թողարկողի և բանկի հետ պարտատոմսերի շուկայում գործակալի գործառույթների կատարման մասին պայմանագիր կնքած անձ:
5) Դեպո հաշիվ՝ պարտատոմսերի հաշվառման համար նախատեսված պահառուի (ենթապահառուի) գրառումների բազմություն, որը միավորված է ընդհանուր հատկանիշերով:
6) Պահառու՝ պարտատոմսերի տեղաբաշխման, շրջանառության և մարման սպասարկման պարտավորությունները կրող, պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք: Պահառուի գործառույթներն իրականացնում է բանկը:
7) Ենթապահառու՝ պահառուական գործունեություն իրականացնող ենթակառուցվածք, որում հաշվառվում են ներդրողներին սեփականության իրավունքով պատկանող պարտատոմսերը՝ ըստ առանձին սեփականատերերի: Սույն կարգի իմաստով՝ ենթապահառու են պահառուի հետ ենթապահառության պայմանագիր ստորագրած ներդրումային ծառայություններ մատուցող անձինք և կենտրոնական դեպոզիտարիան: Սույն կարգի իմաստով՝ Գանձապետական պահառուն չի հանդիսանում ենթապահառու: Գանձապետական պահառուի ներդրողների պարտատոմսերով երկրորդային շուկայի գործառնություններ իրականացնելու համար պարտատոմսերը պետք է պահատվության փոխանցվեն

ենթապահառուի մոտ՝ դեպո հաշվարկները կատարելով “ազատ առաքման” սկզբունքով:
8) Ներդրող՝ պարտատոմսերի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որի պարտատոմսերը հաշվառվում են ենթապահառուի մոտ:
9) Առևտրային բանկ՝ Հայաստանի Հանրապետությունում գործող բանկ, որը չի հանդիսանում պարտատոմսերի շուկայում գործակալ և որին սեփականության իրավունքով պատկանում են պարտատոմսերը:
10) Գանձապետական պահառու՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր մարմնի կողմից պարտատոմսերի անմիջական վաճառքի, ներդրողներին պատկանող պարտատոմսերի հաշվառման և սպասարկման համակարգ:
11) Բրոքերային գործունեություն՝ հանձնարարության, կոմիսիայի կամ գործակալության պայմանագրի հիման վրա այլ անձի (անձանց) հաշվին պարտատոմսերի առուվաճառքի գործունեությունն է:
12) Բորսայական առևտուր՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ֆոնդային բորսաներում պարտատոմսերի առուվաճառքի գործարքների կնքումն է:
13) Պարտատոմսերի արտաբորսայական առևտուր՝ պարտատոմսերով երկրորդային շուկայում բրոքերային գործունեություն իրականացնող անձանց միջոցով ֆոնդային բորսայից դուրս կամ անմիջապես ներդրողների միջև առուվաճառքի գործարքների կնքումն է:
14) Դեպո հաշվարկներ՝ ենթապահառուների և պահառուի կողմից իրականացվող գործառնությունների բազմությունն է, որի արդյունքում իրականացվում է պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում գործարքի մասնակիցների միջև «առաքում՝ վճարման դիմաց» կամ «ազատ առաքման» սկզբունքով:
15) Դեպո հանձնարարականի վավերության ստուգում՝ ենթապահառուի (պահառուի) կողմից իրեն ներկայացված դեպո հանձնարարականի ստուգում, որի ընթացքում ստուգվում է դեպո հանձնարարականի լրացման ճշտությունը և դեպո հանձնարարականի ներկայացումը համապատասխան լիազորություն ունեցող անձի կողմից:
16) Առաքող՝ պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքի կողմ հանդիսացող անձ, որը սեփականության իրավունքով իրեն պատկանող պարտատոմսերը փոխանցում է գործարքի մյուս կողմին:
17) Ստացող՝ պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքի կողմ հանդիսացող անձ, որի սեփականությանը փոխանցում են գործարքի մյուս կողմին պատկանող պարտատոմսերը:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

3. Պարտատոմսերի շրջանառությունը երկրորդային շուկայում պարտատոմսերի օտարման հատուցելի և անհատույց գործարքների իրականացումն է: Պարտատոմսերի օտարման հատուցելի գործարքները պարտատոմսերի առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո), պարտատոմսերի փոխանակման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ թույլատրված գույքի հատուցելի օտարման այլ գործարքներն են: Պարտատոմսերի օտարման անհատույց գործարքները պարտատոմսերի նվիրատվության, ժառանգելու գործարքներն են, ինչպես նաև իրավաբանական անձի վերակազմակերպման հետևանքով պարտատոմսերի օտարումն է:

4. Պարտատոմսերի օտարման գործարքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով սահմանված ձևով՝ հետևյալ փուլերով՝ գործարքի կնքում, դեպո հաշվարկների, անհրաժեշտության դեպքում՝ նաև փողային հաշվարկների (այսուհետ՝ դրամական հաշվարկների) իրականացում, գործարքի կողմերի տեղեկացում: Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է համարվում (պարտատոմսերը օտարված են համարվում) դեպո հաշվարկների կատարման արդյունքում պահառուի (ենթապահառուի) կողմից սույն կարգի համաձայն սեփականատիրոջ դեպո հաշիվներում այն գրանցելու պահից:

5. Պարտատոմսերի երկրորդային շուկայի մասնակիցներ են՝ ներդրողները, գործակալները, առևտրային բանկերը, ինչպես նաև «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայություններ մատուցող այլ անձինք: Պարտատոմսերի երկրորդային շուկայի ենթակառուցվածքներն են՝ պահառուն և ենթապահառուները:

6. Պարտատոմսերի ռեպո (հակադարձ ռեպո) գործարքները կարող են կնքվել գործարքի մասնակիցների միջև փոխհամաձայնեցված կարգով:

7. Պարտատոմսերի առուվաճառքի գործարքները կարող են կնքվել բորսայական կամ արտաբորսայական առևտրի միջոցով: Առուվաճառքի գործարքների կնքման դեպքում գործարքի նախաձեռնող է գնորդը (ստացողը) կամ վաճառողը (առաքողը), որը ներկայացնում է համապատասխան հայտ կամ կնքում է պայմանագիր, որտեղ նշվում է գործարքի գինը և (կամ) ծավալը, ինչպես նաև եկամտաբերությունը, որի չափով գործարքի մասնակիցը ցանկանում է գնել կամ վաճառել պարտատոմսեր:

8. Առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների առարկա կարող են հանդիսանալ միայն այն պարտատոմսերը, որոնց նկատմամբ դրանց սեփականատիրոջ իրավունքները սահմանափակված չեն (ազատ արժեթղթերի կարգավիճակով դեպո հաշվում առկա պարտատոմսերը):

9. Պարտատոմսերով դեպո հաշվարկները կարող են կատարվել գործարքի մասնակիցների դեպո հաշիվները վարող ենթապահառուների (պահառուի) միջոցով՝ սույն կարգով սահմանված ընթացակարգերի համաձայն: Գործարքի մասնակիցների միջև դրամական հաշվարկները կարող են կատարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ կանխիկ կամ անկանխիկ եղանակով: Անկանխիկ եղանակով կատարվող դրամական հաշվարկները կատարվում են սույն կարգով սահմանված ընթացակարգերի համաձայն:

10. Ենթապահառուների և (կամ) առևտրային բանկերի միջև դեպո հաշվարկները կարող են իրականացվել բացառապես նրանց պահառուի մոտ վարվող համապատասխան դեպո հաշիվներով, իսկ դրամական հաշվարկները կարող են իրականացվել միայն հայկական դրամով՝ բանկում վարվող նրանց թղթակցային (բանկային) հաշիվներով:

11. Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված է դրամական հաշվարկների իրականացում կանխիկ եղանակով, անկանխիկ եղանակով՝ կանխավճարի կամ ապառիկ վաճառքի պայմաններով, ապա դեպո հաշվարկներն իրականացվում են «ազատ առաքման» սկզբունքով, սույն կարգի 16-րդ կետում սահմանված ընթացակարգերի համաձայն:

12. Եթե առուվաճառքի պայմանագրով նախատեսված է դրամական հաշվարկների իրականացում անկանխիկ եղանակով, պարտատոմսերի և դրամական միջոցների միաժամանակ առաքման պայմանով, ապա դեպո և դրամական հաշվարկները իրականացվում են «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքով, սույն կարգի 15-րդ կետում սահմանված ընթացակարգերի համաձայն:

13. Պարտատոմսերի ռեպո (հակադարձ ռեպո) գործարքների դեպո և դրամական հաշվարկներն իրականացվում են առուվաճառքի գործարքների հաշվարկների համար սույն կարգով սահմանված կանոնների համաձայն:

14. Պարտատոմսերի առուվաճառքի, ռեպո (հակադարձ ռեպո) գործարքներից բացի, պարտատոմսերով երկրորդային շուկայի այլ գործարքների դեպո հաշվարկներն իրականացվում են «ազատ առաքման» սկզբունքով, սույն կարգի 16-րդ կետում սահմանված ընթացակարգերի համաձայն:

ԳԼՈՒԽ 3. ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

15. Պարտատոմսերի առուվաճառքի «առաքում՝ վճարման դիմաց» սկզբունքով դեպո և դրամական հաշվարկներն իրականացվում են հետևյալ կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

1) Առուվաճառքի կողմեր հանդիսացող առաքողը (պարտատոմսեր վաճառողը) և ստացողը (պարտատոմսերի գնորդը) կամ նրանց կողմից լիազորված անձինք իրենց սպասարկող ենթապահառուներին ներկայացնում են, համապատասխանաբար, «Պարտատոմսերի վաճառքի» և «Պարտատոմսերի գնման» դեպո հանձնարարականներ: Դեպո հանձնարարականները ներկայացվում են ենթապահառուի և վերջինիս հաճախորդի միջև փոխհամաձայնեցված եղանակով ենթապահառուի կողմից դեպո հանձնարարականների ընդունման համար սահմանված գործառնական ժամերի ընթացքում: Եթե դեպո հանձնարարականն ընդունվել է ենթապահառուի կողմից սահմանված ժամերից հետո, ապա այն համարվում է ներկայացված հաջորդ աշխատանքային օրը: Ենթապահառուի կողմից դեպո հանձնարարականը կատարվում է դրանում նշված կատարման օրը՝ սույն կարգով սահմանված ստուգման արդյունքը դրական լինելու դեպքում: Դեպո հանձնարարականում կատարման օր նշված չլինելու դեպքում այն կատարվում է ներկայացման օրը: Եթե ենթապահառուն չի կարող կատարել հաճախորդի կողմից ներկայացված դեպո հանձնարարականը դրանում նշված կատարման օրը, նա վերադարձնում է հաճախորդին դեպո հանձնարարականը առանց կատարման՝ նշելով մերժման պատճառը:

2) Առաքողի ենթապահառուն իրականացնում է ներկայացված դեպո հանձնարարականի վավերության ստուգում և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայություն սռաքողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Ստացողի ենթապահառուն իրականացնում է ներկայացված դեպո հանձնարարականի վավերության ստուգում և անհրաժեշտ դրամական միջոցների առկայության ստուգում ենթապահառուի մոտ վարվող ստացողի դրամական հաշվում կամ ստացողի դրամական հաշիվն այլ բանկում գտնվելու դեպքում՝ ենթապահառուին համապատասխան դրամական միջոցների փոխանցման կատարման ստուգում: Եթե ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:

3) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է վավերության ստուգում: Անվավերության դեպքում դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն փնտրում է իր կողմից ընդունված դեպո հանձնարարականների բազմությունում տվյալ հանձնարարականի զույգ հանդիսացող հանձնարարականը (զույգ հանդիսացող հանձնարարականում տվյալ գործառնությունը բնութագրող բոլոր վավերապայմանները հայելանման արտապատկերում ունեն): Համապատասխան զույգը գտնելու դեպքում

պահառուն ստուգում է առաքվող պարտատոմսերի բավարար ծավալի առկայությունն առաքողի ենթապահառուի համապատասխան ազատ պարտատոմսերի դեպո հաշվում և դրամական միջոցների առկայությունը բանկում վարվող ստացողի ենթապահառուի դրամական հաշվի վրա: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն կատարում է դրամական միջոցների փոխանցում բանկում վարվող՝ ստացողի ենթապահառուի դրամական հաշվից առաքողի ենթապահառուի դրամական հաշվի վրա, իսկ պահառուական համակարգում առաքվող պարտատոմսերի փոխանցում առաքողի ենթապահառուի ազատ պարտատոմսերի դեպո հաշվից ստացողի ենթապահառուի ազատ պարտատոմսերի համապատասխան դեպո հաշվի վրա: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում առաքողին և ստացողին սպասարկող ենթապահառուներին: Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն ենթապահառուներին քաղվածքներ է ուղարկում համապատասխան դեպո հաշիվներից:

4) Պահառուից ստացված հաստատման հիման վրա նույն գործառնական օրվա ընթացքում ստացողի ենթապահառուն մուտքագրում է պարտատոմսերը ստացողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվի վրա՝ միաժամանակ ելքագրելով պարտատոմսերի առքի համար հաշվառված դրամական միջոցները: Առաքողի ենթապահառուն ելքագրում է վաճառքի համար հաշվառված առաքողի պարտատոմսերը և միաժամանակ վճարում վաճառված պարտատոմսերի դիմաց ստացված դրամական միջոցները առաքողին, իսկ առաքողի դրամական հաշիվը այլ ենթապահառուի մոտ կամ առևտրային բանկում գտնվելու դեպքում՝ իրականացնում դրամական միջոցների փոխանցում առաքողի կողմից նշված դրամական հաշվի վրա: Այնուհետև գործառնությունը համարվում է կատարված, և առաքողն ու ստացողը սահմանված ժամկետներում ենթապահառուներից ստացված քաղվածքներով տեղեկացվում են գործառնության կատարման վերաբերյալ: Սույն ենթակետի իմաստով՝ գործողությունները համարվում են կատարված միաժամանակ, եթե դրանք կատարվել են միևնույն գործառնական օրվա ընթացքում:

5) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականները չեն կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

6) Բոլոր այն դեպո հանձնարարականները, որոնց համապատասխան զույգերը պահառուի կողմից սահմանված ժամանակահատվածում (պահառուի գործառնական օրվա ընթացքում) չեն գտնվում, մերժման պատճառի նշումով վերադարձվում են այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

7) Եթե առաքողը և ստացողը սպասարկվում են միևնույն ենթապահառուի մոտ, ապա դեպո և դրամական հաշվարկները սահմանափակվում են տվյալ ենթապահառուով, որը առաքողից և ստացողից զույգ հանդիսացող դեպո հանձնարարականներն ընդունելուց հետո իրականացնում է հաշվարկները սույն կետի 4-րդ ենթակետում սահմանված ընթացակարգերի համաձայն:

8) Եթե առուվաճառքի գործարքի կողմերը ներդրողը և վերջինիս սպասարկող ենթապահառուն են, ապա ենթապահառուն, ընդունելով ներդրողի «Պարտատոմսերի վաճառքի» («Պարտատոմսերի գնման») դեպո հանձնարարականը, դրա հիման վրա կազմում և ներկայացնում է պահառուին «ազատ առաքման» դեպո հանձնարարական, որի հիման վրա պահառուն գործում է սույն կարգի 16-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ենթապահառուն, պահառուից ստանալով գործառնության կատարման հաստատումը, իրականացնում է դեպո և դրամական հաշվարկները սույն կետի 4-րդ ենթակետում սահմանված ընթացակարգերի համաձայն:

9) Եթե առաքողը և (կամ) ստացողը առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարական է ներկայացնում անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի 3-րդ, 5-րդ և 6-րդ ենթակետերում նշված ընթացակարգերի համաձայն:

10) Եթե առուվաճառքի գործարքները ներդրողների կարգադրությամբ կնքվում են պարտատոմսերի երկրորդային շուկայի բրոքերների միջոցով, ապա ներդրողների անունից «Պարտատոմսերի վաճառքի» և «Պարտատոմսերի գնման» դեպո հանձնարարականները ներկայացվում են ենթապահառուներին (իսկ բրոքերը ենթապահառու լինելու դեպքում՝ պահառուին) բրոքերների կողմից:

16. Պարտատոմսերի «ազատ առաքման» սկզբունքով պարտատոմսերի երկրորդային շուկայի գործարքների դեպո հաշվարկներն իրականացվում են հետևյալ կանոնների և ընթացակարգերի համաձայն՝

1) Գործարքի առաքող կողմը կամ վերջինիս կողմից լիազորված անձը իրեն սպասարկող ենթապահառուին ներկայացնում է «Պարտատոմսերի ազատ առաքման» դեպո հանձնարարական՝ սույն կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետում սահմանված կանոնների համաձայն:

2) Առաքողի ենթապահառուն իրականացնում է ներկայացված դեպո հանձնարարականի վավերության ստուգում և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայություն առաքողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Եթե ենթապահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողին: Հակառակ դեպքում ենթապահառուն ընդունում է այն կատարման և իր հերթին համապատասխան դեպո հանձնարարական է ներկայացնում պահառուին:

3) Պահառուն, ստանալով դեպո հանձնարարականը, իրականացնում է վավերության ստուգում և անհրաժեշտ ծավալի պարտատոմսերի առկայության ստուգում առաքողի ենթապահառուի համապատասխան ազատ պարտատոմսերի դեպո հաշվում: Ստուգման դրական արդյունքի դեպքում պահառուն կատարում է

առաքվող պարտատոմսերի փոխանցում առաքողի ենթապահառուի ազատ պարտատոմսերի դեպո հաշվից ստացողի ենթապահառուի ազատ պարտատոմսերի համապատասխան դեպո հաշվի վրա: Այնուհետև պահառուն գործառնության կատարման հաստատում է ուղարկում առաքողի ենթապահառուին, իսկ ստացողին սպասարկող ենթապահառուին ներկայացնում է առաքողի ենթապահառուից ստացված դեպո հանձնարարականի օրինակը, որը հավաստում է տվյալ գործառնության կատարման փաստը: Դեպո հանձնարարականի օրինակը չի ուղարկվում ստացողին սպասարկող ենթապահառուին, եթե գործառնության մի կողմը ներդրող է, իսկ մյուս կողմը՝ վերջինիս սպասարկող ենթապահառու: Գործառնական օրվա ավարտից հետո պահառուն ենթապահառուներին քաղվածքներ է ուղարկում համապատասխան դեպո հաշիվներից:

4) Պահառուից ստացված հաստատման հիման վրա նույն գործառնական օրվա ընթացքում ստացողի ենթապահառուն մուտքագրում է պարտատոմսերը ստացողի ազատ պարտատոմսերի դեպո հաշվի վրա, իսկ առաքողի ենթապահառուն ելքագրում է առաքման համար հաշվառված առաքողի պարտատոմսերը:

5) Եթե պահառուի կողմից կատարվող ստուգման արդյունքը բացասական է, ապա դեպո հանձնարարականը չի կատարվում և մերժման պատճառի նշումով վերադարձվում է այն ներկայացնողներին, և գործառնությունը համարվում է մերժված:

6) Եթե առաքողը և ստացողը սպասարկվում են միևնույն ենթապահառուի մոտ, ապա դեպո հաշվարկները սահմանափակվում են տվյալ ենթապահառուով, որն առաքողի դեպո հանձնարարականն ընդունելուց հետո իրականացնում է հաշվարկները սույն կետի 4-րդ ենթակետում սահմանված ընթացակարգերի համաձայն:

7) Եթե առաքողն առևտրային բանկ է կամ ենթապահառու, ապա նա դեպո հանձնարարական է ներկայացնում անմիջապես պահառուին, որը գործում է սույն կետի 3-րդ և 5-րդ ենթակետերում նշված ընթացակարգերի համաձայն: